ՏԵՂԵԿԱՆՔ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների շրջանակներում <<Կանալ-Հովիտ>> լոկալ հակաթմրանյութային գործողության անցկացման արդյունքների վերաբերյալ

Ի կատարումն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների հավաքական անվտանգության Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման և ՀԱՊԿ անդամ պետությունների թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ղեկավարների համակարգող Խորհրդի 2014-2015թթ. հիմնական միջոցառումների պլանի համաձայն, 2014թ. սեպտեմբերի 12-ին ժամը 12:00-ից մինչև սեպտեմբերի 16-ը ժամը 12:00-ն անցկացվեց «Կանալ-Հովիտ» լոկալ հակաթմրանյութային գործողությունը, որի միջազգային համակարգման շտաբը տեղակայված էր Ղազահստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում:

Գործողության նպատակն էր կանխել մաքսանենգ ճանապարհով աֆղանական թմրամիջոցների հոսքը դեպի ՀԱՊԿ անդամ և Մաքսային դաշինքի մասնակից պետությունների տարածք, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի պատրաստման ընդհատակյա լաբորատորիաների հայտնաբերումը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման դեպքերի կանխումը, ապօրինի շրջանառությունից զենք, զինամթերք ու պայթուցիկ նյութեր հայտնաբերելը:

ՀՀ ոստիկանությունից միջազգային համակարգման շտաբի աշխատանքներին մասնակցեց ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ներկայացուցիչը:

Միջազգային համակարգման շտաբում բացի ՀՀ ներկայացուցչից մասնակցում էին նաև ՀԱՊԿ քարտուղարության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ներկայացուցիչները: Որպես դիտորդ հրավիրված

էին նաև ՌԴ ինտերպոլի ԱԿԲ-ի, ՌԴ ֆինմոնիթորինգի, Աֆղանստանի և Չինաստանի իրավասու մարմինների ներկայացուցիչները:

Գործողությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի հրամանով իր աշխատանքները վերսկսեց “Կանալ” հակաթմրանյութային ազգային համակարգման շտաբը և հաստատվեցին գործողության պլանն ու մտահաղացումը:

Ստեղծվեցին թվով 14 միջգերատեսչական համատեղ օպերատիվ խմբեր, որոնք տեղակայվեցին ՀՀ սահմանային մաքսային անցակետերում՝

-<<Զվարթնոց>> և <<Շիրակ>> օդանավակայաններում, Բավրա, Գոգավան, Պրիվոլնոե, Մադան, Բագրատաշեն, Մեղրի սահմանային անցակետերում, <<Այրում>> ե/կ-ում և 135 օպերատիվ խմբեր՝

-Պրիվոլնոե-Սարչապետ /Լոռու մարզ/, Պաղաղբյուր-Զյունանուշ-Մեծավան-Զորամուտ /Լոռու մարզ/, Պտղավան-Հաղթանակ-Բերդավան /Տավուշի մարզ/, գ.Հաղթանակ, Զորակերտ-Ծաղկուտ /Շիրակի մարզ/ սահմանային հատվածներում, Մեղրի-Գորիս մայրուղու ժամանակավոր ավտոկայանատեղում /Սյունիքի մարզ/, ինչպես նաև Երևան քաղաքում:

Գործողությանը մասնակցեցին ընդհանուր առմամբ 677 ծառայող, որոնցից 523-ը՝ ՀՀ ոստիկանությունից, 36-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարության մաքսանենգության դեմ պայքարի և մաքսային ծառայություններից, 14-ը՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունից, 7-ը՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքերից, 95-ը՝ ՀՀ-ում ՌԴ դաշնային անվտանգության ծառայությունից և 2-ը՝ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից: Բոլոր օպերատիվ խմբերը ապահովված են եղել կապի միջոցներով:

Գործողության ընթացքում ստուգման են ենթարկվել օդանավակայաններում՝ 219 չներթի 24848 ուղևորի /որից 13308-ը օտարերկրացի/ 378,7 տոննա ուղեբեռները,

-երկաթգծի կայարանում՝ 34 բեռնատար և 8 մարդատար գնացքներ,

-սահմանային անցակետերում, մայրուղիներում, քաղաքներում և սահմանային շրջանցիկ հատվածներում քննության են ենթարկվել 16584 տրանսպորտային միջոց, 53551 ուղևոր:

Արդյունքում հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 29 դեպք /քրեական պատասխանատվության է

ենթարկվել 31 անձ/: Ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է ընդհանուր առմամբ 3 կգ 677,4 գրամ տարբեր տեսակի թմրամիջոց, որից 3,7 գրամ <<ափիոն>>, 146 գրամ <<մարիխուանա>>, 0,4 գրամ <<կոկաին>>, 17,3 գրամ սինթեթիկ տեսակի թմրամիջոց, 3 կգ 510 գրամ թմրանյութ պարունակող կանեփի տերևներ, 96 հատ <<սուբուտեքս>> տեսակի թմրահաբ, և 112 հատ հոգեմետ դեղահաբ:

Բացահայտվել է նաև տարբեր հանցագործությունների 50 դեպք, ապօրինի շրջանառությունից առգրավվել է 21 միավոր զենք, 25 հատ ողորկափոխ որսորդական հրացան, 41 հատ նռնակ, 6110 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ, 200 գրամ պայթուցիկ նյութ /տրոտիլ/, 1 հատ սառը զենք: Առգրավվել է մաքսային հսկողությունից թաքցված և տեղափոխման համար արգելված 35926 ԱՄՆ դոլարին համարժեք զումարի իրեր:

Հայտնաբերվել է հետախուզման մեջ գտնվող 21 անձ:

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչություն